ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024թթ. ՀՆԱ-ն (ընթացիկ գներով) և ՀՆԱ-ի ծավալի ինդեքսները (%)

Արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի տարեկան տվյալները, ընթացիկ գներով, մլն.դրամ




ՀՆԱ-ի ծավալի ինդեքսները՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %




2023թ. արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի նախնական տարեկան ցուցանիշը ընթացիկ գներով կազմել է 9 տրիլիոն 502 մլրդ 778.6 մլն դրամ, 2022 և 2021 թվականների համապատասխանաբար՝ 8 տրիլիոն 496 մլրդ 777.9 մլն և 6 տրիլիոն 982 մլրդ 848.6 մլն դրամի պարագայում: 2023թ. ՀՆԱ-ի իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 108.7%, 2022 և 2021 թվականների համապատասխանաբար՝ 112.6%-ի և 105.7%-ի պարագայում:

Տեղեկատվության աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ ամսեկան տեղեկագրերը:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2022-2024թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024թ. հունվարի 31-ին 2023թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 110.7%, 2023թ. հունվարին 2022թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 111.1 %, իսկ 2022թ. հունվարին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 114.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ.հունվարին կազմել է 206 մլրդ 254.3 մլն դրամ, ինչը 2023 թ նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 28 մլրդ 563.1 մլն դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 28 մլրդ 566.1 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. հուվարին կազմել է 17 մլրդ 581.3 մլն դրամ, ինչը 2023 և 2022 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 554.4 մլն և 3 մլրդ 466.5 մլն դրամով:
Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2024թ. հունվարին կազմել է 340 մլրդ 782.5 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 47 մլրդ 863.4 մլն և 109 մլրդ 932.2 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. հունվար կազմել է 236 մլրդ 954.1 մլն դրամ , ինչը 2023 և 2022թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 20 մլրդ 994.4 մլն և 80 մլրդ , 238.1 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. հունվարին 2023 թ. հունվարի նկատմամբ կազմել է 121.%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101,4 %-ի և 116.6 %-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2024թ. հունվարի 31-ին 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ կազմել է 109.5 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112.2 %-ի և 103 %-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2024թ հունվարի 31-ին 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ կազմել է 119.3 % 2023-2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.7 %-ի և 111.5 %-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2024 հունվարի 31-ին 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ կազմել է 104.4%, 2023 և 2022 թվականների ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 125.9 %-ի և 121.2 %-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. հունվարի 31-ին կազմել է 35 մլրդ 915. 7 մլն դրամ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 4 մլրդ 218.8 մլն դրամով, 2022 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 17 մլրդ 37.6 մլն դրամով: Մշակող արդյունաբերու-թյան մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024 թ. հուվարի 31-ին կազմել է 132 մլրդ 827 մլն դրամ, ինչը 2023 թ և 2022 թ նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է՝ համապատասխանաբար 32 մլրդ 958 մլն և 43 մլրդ 547 մլն դրամով: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակ արարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 2024թ. հունվարին կազմել է 35մլրդ 130.3 մլն դրամ, (ընթացիկ գներով), ինչը 2023թ. ցուցանիշից պակաս է 345.9մլն դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1 մլրդ 622.2մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. հուվարի 31-ին կազմել է 2 մլրդ.381.3 մլն դրամ, ինչը 2023թ. և 2022թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 169.8 մլն և 434 .5 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. հունվարի 31-ին, 2023 թ. հունվարի 31-ի նկատմամբ կազմել է 89.9%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.6%-ի և 99.1%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. հունվարի 31-ին 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ կազմել է 138.5 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.3%-ի և 125.1 %-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. հունվարի 31-ին 2023թ. հունվարի 31-ի նկատմաբ կազմել է 108.1 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 92.8 %-ի և 121.3 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. հունվարի 31-ին 2023թ.հունվարի 31-ի նկատմամբ կազմել է 107 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.5%-ի և 108.2 %-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ.հուվարի 31-ին կազմել է 21 մլրդ 988..4 մլն դրամ, ինչը 2023 և 2022 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 976.3. մլն և 1 մլրդ 348 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. հուվարի 31-ին կազմել է 49 մլրդ 198.1 մլն դրամ, ինչը 2023թ. և 2022 թ,ի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համա պատասխանաբար 623 .6 մլն և 17 մլրդ 384.2 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. հունվարի 31-ին կազմել է 72 մլրդ, 477.8 մլն դրամ ինչը 2023 և 2022 թվականների նույն ժամանա կաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 13 մլրդ 99.1 մլն և 33 մլրդ 104..7 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2024թ. հունվարի 31-ին 2023թ հունվարի 31-ին նկատմամբ կազմել է 103,9 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.5 %-ի և 104.2 %-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2024թ. հունվարի 31-ին 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ կազմել է 101,3 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 152.5 % և 126,3 %-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2024թ. հունվարի 31-ին 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ կազմել է 113. 4%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 130.1 %-ի և 99.2 %-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2024թ. հունվարին` 2023թ հունվարի 31-ի նկատմամբ կազմել է 99.1 %, 2023թ հունվարի 31-ին 2022թ նույն ժամանակաշրջ. նկատմամբ` 108.1%, 2022թ. հունվարին 2021 թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 107.1%: ՍԳԻ-ն 2024թ. հունվարին 2023թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 101.2%, 2023թ. հունվարին 2022թ.դեկտեմբերի նկատմամբ` 101.4 %, 2022թ. հունվարին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ` 101,6%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2024թ. հունվարի վերջի դրությամբ կազմել է 1 տրլն 107մլրդ 91 մլն դրամ, ինչը 13 մլրդ 421մլն դրամով կամ 1.2 %-ով պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից 37 մլրդ 44 մլն դրամով կամ 3,2 %-ով 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2024թ. հունվարի վերջի դրությամբ կազմել է 63546 մարդ, ինչը 5514 մարդով կամ 8 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 22171 մարդով կամ 25.9%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2024 թ. հունվարի վերջի դրությամբ կազմել է 45872 մարդ, ինչը 2485-ով կամ 5,1.%-ով պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 12051 մարդով կամ 20.8 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա

ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2024թ. հունվարի 31-ին կազմել է 2 մլրդ 145.6 մլն. դոլար, ինչը 945.5 մլն դոլարով կամ 78.8 %-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 474. 7 մլն. դոլարով 219.8%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Արտաքին առևտրի բացաս. հաշվեկշիռը 2024թ հունվարին կազմել է է - 249.8 մլն դոլար, ինչը 51.5 մլն դոլարով կամ 17.1 %-ով պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և -77,9 մլն դոլարով կամ 45.3 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2024 թ. կազմել է 934.1 մլն դոլար, ինչը 484.7 մլն.դոլարով կամ 107.9 %-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 684 6 մլն դոլարով կամ 274.4 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2024թ. հունվարին կազմել է է 1մլրդ 211.6 մլն դոլար, ինչը 460.9 մլն. դոլարով կամ 61.4 %-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 790.2 մլն դոլարով կամ 187.5%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2024թ. հունվարին կազմել է 266990 դրամ, ինչը 17712 դրամով կամ 7.1 %-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 62683 դրամով կամ 30.7 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
2024թ. հունվարի 31-ին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 68 մլրդ 645.8 մլն դրամ ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը` -63 մլրդ 810 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը` -4 մլրդ 835.8 մլն դրամ: 2023թ. հունվարի 31-ին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 78 մլրդ 174. մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -57 մլրդ 188.3 և -20,986,4 մլն դրամ: 2022թ. հունվարի 31-ին պետական բյուջեի հավելուրդը կազմել է 60 մլրդ 983.3 մլն դրամ, ընդ որում ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -42,821,5 և 18,161.8 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ